

ՊՈՒՇ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԿՍԱԾ Է ԱՐԴԵՆ...

Մ. Նահանգներու նախագահ ճորձ Պուշ երէկ ընթացքի մէջ դրած է իր վերընտրութեան միտող քայլերը, պաշտպանելով տուրքերու կրճատումը՝ իբրեւ տագնապալի տնտեսութեան յարմար դեղ եւ պատերազմը՝ իբրեւ Իրաքի մէջ ճիշդ դեղ:

Նախագահը, մէկդի ձգելով ամերիկեան ուժերու կողմէ հաւաքական քանդումի վէճերը չգտած ըլլալու իրողութիւնը, ըսած է, որ ամերիկեան ապահովութիւնը կը պահանջէր, որ ինք տապալէ Սաուտա չհիւսթը:

Ընդդիմադիր դեմոկրատներ զատապարտած են պատերազմին եւ Իրաքի գրաւումին աճ արձանագրող գիւր, ինչ կը վերաբերի միլիտար տոյարներու հասնող անհրաժեշտ գումարին եւ ամերիկեան ուժերուն արձանագրած պոտենցիալ:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԸՆԹԱՅԻՆ ՆԻՍՏԸ



Նախարարաց խորհուրդը երէկ թանգարանի շէնքերէն իր կեդրոնատեղիին մէջ կէսօրէի առաջ ժամը 11:00ին գումարեց իր հերթական նիստը, նախագահութեամբ նախագահ գործադիր տնօրէն եւ ներկայացուցիչներու վարչապետ Ռաֆիկ Զորիբի:

Նիստին բացակայեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ նախարարներ Թալալ Արսլան, Պահմաթ Թապաւար, Սիլվան Զրեմի, Ալուպ Զըմալ, Նալիլ Զըրաուի, Զաքի Արիսի, Ժան Լուի Քորտա-

հի, Էլի Սքաֆ եւ Էլիաս Մըր: Նիստին ընթացքին նախագահ Լահուտ արծարծեց երկրին վերջին իրադարձութիւններուն, Սուրիոյ դէմ գործադրուող իրաւունքներու բռնարարներուն, Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի ՄԱԿի յատուկ պատուիրակ Թերի Ռոտ Լարսընի Լիբանան այցելութեան կապուած հարցեր:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ Լիբանան Սուրիոյ դէմ կատարուած իրաւունքներու բռնարարներուն իր-

րեւ հակադրեցութիւն բողոքագիր մը յղած է ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին եւ անկէ պահանջած, որ գումարէ ընդհանուր ժողով մը՝ զատապարտելու համար իրաւունքներու խախտումները:

Կառավարութիւնը քննարկեց 87 կէտերէ բաղկացած օրակարգ մը, երեք օրինակներ վաւերացուցուցին՝ յանդիմանաբար իրաւունքներու խախտումները:

Շար.՝ էջ 2

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԼԻԿԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ, ԻՍՐԱՅԷԼ ԿՈՂՋՈՒՆԵ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴԵՍ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԻՍԿ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՉՇԵՏԵԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՔԱՅԼԵՐՈՒՆ

Սուրիա զատապարտեց, իսկ Իսրայէլ ողջունեց Դամասկոսի դէմ պատժամիջոցներու ամերիկեան ծրագիր մը, որ Ուաշինկթըն - Դամասկոս կապերը կը դնէ «թշնամական» մակարդակի վրայ:

Սուրիական պաշտօնական մամուլը զատապարտեց ամերիկեան որոշումը, զոր կը նկատէ հետեւանքը Սուրիոյ դէմ իսրայէլեան արշաւին եւ որուն շուտով արձագանգեցին ամերիկեան կառավարութեան մէջ գործող «քապէ»ները: «Սաուրա» կը գրէր, որ ամերիկացի ղեկավարներուն կողմէ որոշուած այս ձեւի որոշումներուն նպատակն է ծառայել Իսրայէլի, անոր քաղաքականութեան եւ յարակողական ծրագիրներուն: «Սաուրա» յիշեցուց, որ տակաւին կարճ ժամանակ մը առաջ, Ուաշինկթըն կը

դրուատէր Ռուսա Պըն Լատէնի ղեկավարած «Քալիտա» կազմակերպութեան հետեւորդները հալածելու Դամասկոսի ճիգերը:

Կառավարութեան պաշտօնաթերթը՝ «Թըշրին», աւելի դիւանագիտական մտայնութիւնը որդեգրեց, դիտել տալով որ Սուրիա կը շարունակէ կառուցած մնալ միջազգային օրէնքին, զոր կը յարգէ: «Թըշրին» կը գրէր նաեւ, որ Դամասկոս բաց է որեւէ երկրի հետ առարկայական, շինիչ եւ հաւասարակշռուած երկխօսութեան մը դիմաց: Օրաթերթը վզուշացուց սակայն, թէ Սուրիոյ համար նախապատուութիւն կը վայելեն սպառնալի սկզբունքները, իրաւունքներն ու ազգային շահերը:

Շար.՝ էջ 10

«ՔԱՏՐԱՅԻՆ ԶԱՐԴ» ՏԵՂԻ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅ

ԿԸՍԵ ԸՆԿ. ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Հայաստանի Ազգային Ժողովի երկուամսեայ ընթացքին իրենց կարծիքները յայտնեցին կառավարական տարբեր պաշտօններու՝ համաձայնական դաշինքի անդամ երեք կուսակցութիւններէն: Գաղտնիքի շնորհիւ ընտրուած զուգահեռ շուրջ: Դաշինքի քաղաքական ուժերը վերահաստատեցին քաղաքացիական մարտի միջոցով բացարձակ եւ կազմակերպական եւ արհեստավարական կարողութիւններով գործիչներ ճանաչելու մտադրութիւնը:

Ազգային Ժողովի «Ժողովրդավարական պատգամաւոր» խումբի ղեկավար Կարէն Կարապետեան անդրադառնալով այս հարցին մէջ, որ որոշ մտահոգութիւններ ունի, սակայն «քաղաքական պատասխանատուութիւն ստանձնած ուժերը պետք է նաեւ լծակներ ու միջոցներ ունենան իրենց ստանձնած պարտականութիւնը իրականացնելու համար»:

Հակառակ այս բացատրութիւններուն, «Արդարութիւն» եւ «Ազգային միաբանութիւն» խմբակցութիւններու ներկայացուցիչները «աթոռակոխ» կը նկատեն դաշինքի մէջ պաշտօններու բաժանման շուրջ համաձայնութիւնը:

Հ. Յ. Դ. Ազգային Ժողովի խմբակցութեան ղեկավար ընկ. Լեւոն Մկրտչեան քաղաքական դաշտի անկախութեան հեթանոսական դրսեւորում նկատեց վերոնշյալ օրակարգին մէջ: «Մեզի համար ոչ թէ այս կամ այն պաշտօն է կարեւորը, այլ՝ սկզբունքային հարցերը, պատասխանատուութեան աստիճանը, ինչպէս նաեւ հաւասարապէս տեղեկացուած ըլլալը տարբեր մարգերու մասին, ինչ որ նաեւ ընտրութիւններուն եւ ձեւաւորուած դաշինքի իբրեւ արդիւնք ձեռք բերուած համաձայնութեան արդիւնք է, մէջք Լեւոն Մկրտչեան, աւելցնելով, որ «քաղաքացիական տեղի պիտի չունենայ եւ անհիմն է աւելորդ լարուածութեան յառաջացումը»:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ

ԼԱՐՍԸՆ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԵՏ



Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ երէկ ընդունեց Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի ՄԱԿի յատուկ պատուիրակ Թերի Ռոտ Լարսընը, որուն հետ քննարկեց Սուրիոյ դէմ կատարուած իրաւունքներու բռնարարները: Ներկայ գտնուեցաւ նաեւ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ:

Նախագահ Ասատ շեշտեց, որ Շարսընով ղեկավարուող իրաւունքներու կառավարութիւնը պատերազմի կառուցական լուծումներու իր ընթացքը շարունակելու առաջն պատերազմի:

Իր կարգին, Լարսըն յուսախաբութիւն յայտնեց Սուրիոյ դէմ իսրայէլեան բռնարարներուն առնչութեամբ եւ շեշտեց, որ ՄԱԿի ընդհանուր բարոյագրական ժողով Անան կը գորակցի Սուրիոյ եւ կ'ողջունէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին ճամբով իր հարցերը լուծելու խոստումը:

ԱՀՄԵՏ ՔՈՐԷՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ՝ ՆՈՐ ՏԱԳՆԱՊ ՄԸ ՊԱՏՃԱՌԵԼՈՎ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ քաղաքական նոր տագնապ մը պատճառեց պաղեստինեան իշխանութեան ներկայացնելով հրաժարականներ: Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսատ Բարաֆաթի մօտիկ աղբիւր մը հաստատեց հրաժարականը ներկայացնելու լուրը, սակայն չըսաւ, թէ նախագահը ընդունած է զայն կամ ոչ:

Քորէյի հրաժարականին լուրը հրապարակուելէն կարճ ժամանակ մը առաջ յայտարարուած էր, թէ պաղեստինեան խորհրդարանի նիստը, որ տեղի պիտի ունենար երէկ, անորոշ ժամանակի մը համար յետաձգուած է: Կը նախատեսուէր, որ Քորէյ այդ նիստին ներկայացնէր իր կառավարութեան ծրագիրը՝ խորհրդարանին վաւերացումը ստանալու համար: Քորէյի եւ խորհրդարանին մօտիկ աղբիւրները դիտել տուին, որ նիստը յետաձգուեցաւ, որովհետեւ հաւանականութիւն կար, որ դահլիճը չվաւերացուի, նկատի առնելով որ կառավարութիւնը կազմուած էր Արաֆաթի կողմէ հրամանագրով մը իրրեւ ստիպողական վիճակի արտակարգ դահլիճ: Կարգ մը երեսփոխաններ դժգոհութիւն յայտնեցին, որովհետեւ պաղեստինեան

օրէնքը չարտօնեւ ստիպողական վիճակի կառավարութիւններու կազմութիւնը:

Այլ աղբիւրներ յայտնեցին, որ Արաֆաթ եւ Քորէյ տարակարծիք էին խորհրդարանին նիստին իրենց ակնկալութիւններուն մասին: Մինչ Արաֆաթ կը պահանջէր, որ իննանդամ արտակարգ դահլիճը վաւերացուէ ստանալով, Քորէյ աւելի հակամէտ էր միայն ծրագրին վաւերացումը ստանալու եւ աւելի ուշ՝ բնական ու սովորական կառավարութեամբ մը ներկայանալու:

պատրաստ է զինադուրի մը գծով բանակցելու Իսրայէլի հետ: Ան ըսած էր նաեւ, որ պատրաստ է մինչեւ իսկ վարչապետ Արիէլ Շարոնի հետ տեսակցելու:

ԱՆՆԱՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՍԸ ԱՅՐՈՅՈՂՈՒՄԱՆ ՄԵՋ

Պաղեստինցի մը սպանուեցաւ եւ երկու իսրայէլցիներ վիրաւորուեցան, երբ պաղեստինցի զինեալ մը անձնասպանական գործողութիւն մը կատարեց թուրքարմի մէջ, իսրայէլեան անցարգելի մը մօտ, յայտնեց իսրայէլեան աղբիւր մը:

ԱՐԱՖԱԹ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՎՍՏԱՀԻ ՔՈՐԷՅԻ

Երէկ գիշեր հաղորդուեցաւ, որ Արաֆաթ տակաւին վատառութիւն ունի Քորէյի եւ անոր զաւիլիճին նկատմամբ, ըստ Արաֆաթի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնայի, որ յայտնեց նաեւ, թէ Քորէյի հրաժարման հարցը ներքին գործոց նախարարի աթուրի կապուած «ներքին» բնական խնդիր մըն է, որ յառաջիկայ 24 ժամերուն կը լուծուի շատ հաւանաբար»:

Պաշտօնատար մը ըսաւ, որ նիստին առաջ, Ֆաթհի դեմոկրատներու հանդիպումի մը ընթացքին ծայր տուած է «վէճը» եւ թէ Քորէյ քաղաքացիական պատերազմի մը կազմը ղուրս ելած է: Քորէյ մը օր առաջ, Քորէյ յայտարարած էր, որ

տարեց թուրքարմի մէջ, իսրայէլեան անցարգելի մը մօտ, յայտնեց իսրայէլեան աղբիւր մը:

«Աքսայի Նահատակներու ֆաղանգները» ըստ ստանձնեցին գործողութեան պատասխանատուութիւնը: Գործողութիւնը տեղի ունեցած էր յետմիջօրէին: Պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ յայտնեցին նաեւ, որ գործողութեան անմիջապէս ետք իսրայէլեան ուժեր թուրքարմ ներխուժեցին եւ կրակմարի գործընթացի շարունակեցին:

«ԱԶԳԱԿ» Ի ՄՐՅԱՆՔ

Երկուշաբթի, 13 Շոկտեմբերին սկսեալ հետեւեցք «Ազգակ» ի պատմամշակութային մրցակցին:

Սանրամասնութիւնները օրին:

ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Աֆիլ իրարօգնութեան սնտուկը ուրախ է յայտարարելու, թէ 2003-2004 տարեշրջացին համար պիտի շարունակէ Գալտի տարի հաստատած աշակերտական ֆոնդը:

Աֆիլ աշակերտական ֆոնդին կրնան օգտուիլ Գալտի արտադրութեան միջնակարգ բոլոր հայ աշակերտները, որոնք կը յաճախեն հայկական վարժարան:

Դիմումագրութիւնը կարելի է ստանալ Աֆիլի գրասենեակէն, «Արիւն» շէնք, Դ. յարկ, Շոկտեմբեր 14Ը 18, 2003:

Աֆիլ իբրեւ իրարօգնութեան սնտուկ միշտ ալ պատրաստ եղած է առողջապահական եւ կրթական մակարդակներու վրայ իր նպաստը բերելու:

Զնորհակալութիւն բոլոր իր անդամներուն, որոնք առաջին օրէն ներկայ կանգնեցան եւ հաւատարմութիւն անոր առաքելութեան:

ԱՅՇՈՒ

ՏՈՍՍ

ԹԵՐՐՄԻՆԵՅԹԸ ԵՏՔ ՆԱԵՒ ՌԱՄՊՈՒՆ...

Հինա որ Առնոյտ Շվարցենեկը ընտրուեցաւ Քալիֆորնիոյ նահանգի կառավարիչը, ամերիկացիները, ո՛ր նահանգին մէջ ալ գտնուին, կրնան իրենց բնակարաններուն դռները եւ պատուհանները բաց քանակալ, որովհետեւ թրքմիսէրը հասնաւ իշխանութեան գլուխ եւ պիտի չհանդուրժէ ոչ մէկ թշնամակաւ արարք ամերիկացիներուն եւ Միացեալ Նահանգներու դէմ:

Ինչպէս միւս բոլոր մարկերուն մէջ, Միացեալ Նահանգներու նաեւ քաղաքականութեան մէջ քայլ կը պահեն նորութիւններուն հետ եւ միշտ հետամուտ են դարուն ոգին պահպանելու: Անցեալին երբ ի պատուի էին ամերիկացի կովարները, ամերիկացիները Սպիտակ Տուն հասցուցին Ռոնըլտ Ռեյգանը, որ իր նախագահութեան ժամանակաշրջանին Ամերիկան կառավարեց քառուկոյսի մը նման:

Ներկայիս պայմանները փոխուած են եւ աշխարհի հոգը պետութիւնը ինկած է քարիղի խաղին եւ ահաբեկչութեան ծուղակին մէջ, հետեւաբար ամերիկացիները ի վերուստ տրուած կարողութեամբ մը կը պահեն, որ գերադրական վէճերով պիտուած սուփիզմէն մը պէտք ունին իրենց Ամերիկան փրկելու համար սատանաներուն ճիրաններէն: Ուրեմն փրկութեան աշխատանքը բնականաբար պիտի սկսէր Հոլիվուտէն, այսինքն Քալիֆորնիա նահանգէն, ուր երբեմնի պատի պըլտըրը այսօր հասաւ նահանգի կառավարիչի պաշտօնին, ուրկէ շատ դիրտութեամբ կրնայ հասնիլ Սպիտակ Տուն: Սակայն այս իրագործումին համար Առնոյտ Շվարցենեկը պէտք է տպաւորէ ամերիկացիները, որոնք ներկայիս ամերիկեան քէչի մըրցումներուն ընթացքին կոկորդիսին կը պատռեն՝ America the greatest nation in the world պոռալով:

Շվարցենեկը նախ կառավարիչի իր պաշտօնին ստանձնման առաջին օրը իր գրասենեակը պէտք է հասնի պըլտըրի պաշտօնով մը, շէնք մտնէ կայծակի նման եւ քանի մը պատ փլէ՛ աքացիներ տալով: Ապա ան ահաբեկու նայուածք մը պէտք է շարունակէ իր շուրջիններուն վրայ, որոնք սարսափած այս մերօրեայ հերքիւմէն պէտք է ծնկաչոք հայցեն անոր ներողամտութիւնը: Ասոնք ընելէ ետք, Շվարցենեկը կրնայ քողապերծել այն բոլոր դաւերը, որոնք կը սարքուին ամերիկացիներուն եւ Ամերիկայի դէմ: Չէ՞ որ ինք թրքմիսէրն է եւ ունի թշնամիները պզտանելու երկնատուր կարողութիւնը:

Սակայն հարցը հոն է, որ ամերիկացիները քիչ մը ուշացան իրենց սպասարար գտնելու եւ գահին բարձրացնելու: Եթէ Շվարցենեկը թրքմիսէրը երկու տարի առաջ հասած ըլլար Քալիֆորնիոյ կառավարիչի աթոռին, թերեւս ամերիկացիք իրաքի մէջ այսքան չխայտառակուէին...

Ամենայնդէպս եթէ ամերիկացիները կ'ուզեն յաւելաւ պահովութիւն իրենց հայրենիքին համար, պէտք է Ռամպոն ալ իշխանութեան հասցնեն: Այդպէս աւելի լաւ կ'ըլլայ:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պրերի երէկ Այնէլ Թինէի մէջ ընդունեց երեսփոխան Ատնան Արաքժին, որուն հետ քննարկեց երկրին վերջին իրադարձութիւնները:

Պրերիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանչո Միսթրօթթա: Քննարկուեցան Լիբանան - Իտալիա երկկողմանի յարաբերութիւնները:

Պրերի ընդունեց նաեւ Չինաստանի մէջ Լիբանանի դեսպան Սիէյման Ռասին:

● ԲԱՆԱԿԻ հրամանատարութեան հրապարակած հաղորդագրութեան համաձայն, երէկ իսրայէլեան օդուժը առաւօտեան ժամը 2:05էն մինչեւ 8:00 Չահրանիի վրայով կատարեց թռիչքներ, հասնելով մինչեւ Տամուր եւ Տահր էլ Պայտար:

● ԱՇԽԱՍԱՆՔԻ նախարար Ասատ Հարուան երէկ վաւերացուց որոշում մը, որ կը վերաբերի օտար աշխատատեղերու ապահովագրութեան: Օրէնքը, ապահովագրող ընկերութիւններուն կը պարտադրէ տարբերակաւ տոլար տրամադրել աշխատատեղի մը մահուան պարագային, դիակը փոխադրել անոր հայրենիքը, 5000 տոլարի գումարի հատուցում, ինչպէս նաեւ ապահովագրող աշխատատեղին մինչեւ 25 հազար տոլարի բուժում:

● ԼԻԲԱՆԱՆԵԱՆ համայնարանի դասախօսներու լիկայի գործադիր խորհուրդը երէկ գումարեց ժողով մը, որուն ընթացքին որոշեց մէկ շաբթուան դասախօսի գլխիկ, մինչեւ պահանջներու հատուցում: Խորհուրդը ժողովէն ետք հաստատեց հաղորդակցութիւն մը, նշելով, որ 14 Հոկտեմբեր 2003ին դասախօսը կը սկսի եւ կը տեւէ մէկ շաբթ: Ապա կառավարութեան կեդրոնաւորին երեսօրդարանին առջեւ կը կատարուին բողոքի ցոյցեր:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Հինգշաբթի, 9 Հոկտեմբեր 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիասի վեհարանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Յունաստանի դեսպան Ճորճ Կապրիէլիտեսի այցելութիւնը: Դեսպանը անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Յունաստանի միջեւ գոյութիւն ունեցող հոգեւոր, քաղաքական ու մշակութային սերտ կապերուն: Նաեւ գոհունակութեամբ արտայայտուեցաւ վեհափառ հայրապետին եւ Յունաստանի արքեպիսկոպոս Նիքիթոսուլոսին ունեցած բարեկամական ջերմ յարաբերութեան:

Արամ Ա. վեհափառ իր խօսքին մէջ անդրադարձաւ երկու ժողովուրդներուն դարաւոր բարեկամութեան, յատկապէս մարդկային իրաւանց բնագաւառէն ներս: Յանուն երկու ժողովուրդներու արդար իրաւունքներու ձեռքբերման տարուող պայքարը միասնական ջանքերով ու նոր թափով յառաջ տանելու գաղափարով, վեհափառ հայրապետը շնչոտեց Հայ Դատի արդար լուծման գծով միջազգային մակարդակներու վրայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան անցեալի եւ այժմու դերակատարութիւնը:

Հանդիպման աւարտին, դեսպանը յանուն Յունաստանի պետութեան, հրաւիրեց վեհափառ հայրապետը ներկայ գտնուելու յառաջիկայ Դեկտեմբերին սկիզբը, ի պատիւ Յունաստանի նախագահին Պէյրութի մէջ տրուելիք պաշտօնական ճաշկերոյթին, նախագահին Լիբանան կատարելիք պաշտօնական այցելութեան առիթով: Հանդիպման ներկայ գտնուեցան նաեւ Լիբանանի հայոց առաջնորդ Գեղամ եպօ. Խաչերեան:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆԸ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆԻՒ

Վիճակագրութեան կեդրոնական վարչութիւնը կը յայտարարէ, թէ Հինգշաբթի, 9 Հոկտեմբեր 2003էն սկսեալ վարչութիւնը 15 օրուան տեւողութեամբ կ'ընդունի պետական վարչամեքենային դուրս գտնուող անձերու դիմումները հետեւեալ պաշտօններուն համար.

Քննիչ, խումբի ղեկավար, գետնի վրայ դիտարկում կատարող, գրասենեակային քննիչ եւ քոտերու մասնագէտ՝ ամբողջ Լիբանանի տարածքին գտնուող շէնքերու եւ հաստատութիւններու մասին ուսումնասիրութիւն մը պատրաստելու շրջագծին մէջ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի դիմել Վիճակագրութեան կեդրոնական Գրասենեակ, որ կը գտնուի Քանթարի փողոցին վրայ, Մըրի աշտարակին մօտ, «Առեւտուրի եւ էլեւմուտքի» շէնքին մէջ, հինգերորդ յարկ:

Մանրամասնութեանց համար հեռաձայնէլ հետեւեալ թիւերուն. 373162 եւ 373163:

ՎԱՆՔ ՓՈՒՍԿԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՄԻՆ - ՉՄՄԱՌ

ԿԻՐԱԿԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԱՆԵԼԻ ԻԳՆԱՏԻՈՍ
ՄԱՆՈՅԵԱՆԻ

Սուրբ պատարագ պիտի մատուցանէ
ԳԵՐՊ. ՇԱՅՐ ԳԵՈՐԳ
Թ. Շ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ
Պատրիարքական փոխանորդ
Զմմառու Միաբանութեան

Առաւօտեան ժամը 10:30ին
Զմմառու վանական եկեղեցոյ մէջ

Երեկոյեան ժամը 5:00ին
ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՉՄՄԱՌՈՒ ՄԻԱԲԱՆ
ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ
ՅՈՒՇԱԿՈՒԹՈՂԻՆ

մասնակցութեամբ Դամասկոսի
ԿԿՄ «Բնար» երգչախումբին

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵՆԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայրենի միջազգային դաշնակահար
ԱՐՄԵՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ
եւ
Հայրենի տաղանդաւոր ջութակահար
ՄԱՐՏԻՆ ԵԱԻՐԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003ԻՆ

Arabic calligraphy and logos for the concert advertisement.

9 Հոկտեմբերի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ իրաքի մէջ Թուրքիոյ պինտորներուն գործուղման առնչութեամբ Պրեմիեր յայտարարութիւնը եւ Առնոյտ Շվարցենեկը Քալիֆորնիոյ նոր կառավարիչ նշանակուիլը:

ԹԵՐԻ ՌՈՏ ԼԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻԱՅ ՎՐԱՅ ԵՂԱԾ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԱՆԴՐԱԳԱՐՁ

«Անուար» օրաթերթը գրած է, թէ Պուշ եւ քնկրէսի մէջ Իսրայէլի դաշնակցիները կը պահանջեն Սուրիոյ պատիժներ սահմանելու ընտրանքին: Ըստ թերթին, ՄԱԿի պատուիրակը կը յայտնէ, թէ Իսրայէլեան յարձակումները վտանգաւոր հանգրուանի մը դուռ կը բանան:

Թերթը դիտել տուած է, թէ բջիջայինի օրակազմը Նախարար Խորհուրդի նիստը սպառնալիքի տակ կ'անցնէ, իսկ «Մատիս» դրամատան հարցով 7 նոր բողոքներ կը ներկայացուին դատարանին:

«Սաֆիր» նշած է, թէ Լարսըն Լիբանան կը սպառնայ, թէ ինք կրնայ չբա-

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորհուրդին ընթերցում՝ արաբերէն
- 8:45.- «Աստղ»
- 9:40.- «Առաւօտեան տոն»
- 11:30.- Լիբանանեան մամուլի խորհուրդին ընթերցում՝ հայերէն
- 11:45.- «Լեռ Կամ-սար»
- 3:00.- Hit Parade. Արաբերէն յայտագիր. ապա հարցազրոյց եզրիտացի հայագի դերասանուհի Լուպուլայի հետ
- 4:45.- «Բարի երեկոյ Վանայ Չայն».
- 5:00.- Որ յայտագիր. ուղղակի ձայնասփռում՝ այլազան եւ հետաքրքրական միներ, երգեր, հարցազրոյց եւ այլն
- 7:00.- «Ռազմիկ».
- 7:00.- մրցանք. ուղղակի ձայնասփռում
- 8:00.- Ուղղակի ձայնասփռում հարցազրոյցի ֆրանսացի աստղ երգիչ Փաթրիք Ֆիորիի հետ՝ Virgin Mega Storeն

լարարուիլ բողոքներ կայացնելով, իսկ Լարսըն կը յայտարարէ, թէ ինք ո'չ նամակ ունի փոխանցելիք եւ ոչ ալ միջնորդութիւն ընելու եկած է:

Ըստ թերթին, սահմանին վրայ եղած լարուած կացութիւնը գերիներու առնչութեամբ եղած բանակցութիւնները կը խանգարէ:

Թերթին համաձայն, քնկրէսը իսրայէլեան սպառնալիքները կը թարգմանէ իբրեւ գործուած արարք եւ կը յայտարարէ, թէ երեսփոխանական յանձնարարութիւնը կը ընէ Սուրիան պատժելու կոչ մը, իսկ ղեկավարութիւնը դէմ չի կենար այս քայլին:

«Նահար» օրաթերթը գրած է, թէ Մոֆայ յայտնեց, որ Այն Սահրայի վրայ ինկած ռումբին առնչութեամբ որոշում տրուեցաւ 11 Սեպտեմբերին. Սուրիոյ դեսպանը սպառնացած է Իսրայէլի եւ Դամասկոս անոր կեցածքը նկատած է անձնական մեկնաբանութիւն:

Ըստ թերթին, Սպիտակ Տունը վիշեցաւ պատժամիջոցներու ստորինման դէմ դնող իր կեցուածքին եւ յանձնարարութեամբ Սուրիան հաշուետուութեան կանչելու ի խիստ վերաբերմունք ցուցաբերեց Սուրիոյ նկատմամբ:

«Նահար» դիտել տուած է, թէ Լարսըն յայտնեց, թէ մտաւոք է իրավիճակի վատթարացումով:

«Լիուս»ի համաձայն, Անանի պատուիրակը Դամասկոս ուղղուեցաւ իսրայէլի կեցուածքին եւ յանձնարարութեամբ Սուրիան հաշուետուութեան կանչելու ի խիստ վերաբերմունք ցուցաբերեց Սուրիոյ նկատմամբ:

«Նահար» նշած է, թէ Իսրայէլ կը մտադրէ իր պահեստի պինտորները կանչել, իսկ Քորէյի կառավարութիւնը կը ներկայանայ երեսփոխաններուն՝ Ֆաթիի կողմէ անոր ուղղուած քննադատութիւններէն ետք:

Ըստ թերթին, «քանդակ» ընտրուեցաւ Քալիֆորնիոյ կառավարիչ:

«Վայթ»ի համաձայն, Ֆրանսա յայտարարած է, թէ Սուրիա կը գտնուի վտանգաւոր գոտիին մէջ եւ ան պէտք չէ անտեսել ամերիկեան կեցուածքներն ու կարծիքները:

ԻՐԱՔԵԱՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

«Նահար» գրած է, թէ Իրաքի իշխող խորհուրդը կը փորձէ լուծում մը գտնել թրքահան ուժերու Իրաքի մէջ տարածումին, իսկ Ռաշիդ կը նկատուի իրաքի մէջ քուէարկութեան յետաձգումին:

տի մէջ իրաքցի ցուցարարներ կը կանգնին ամերիկեան հրատարակչութեան դիմաց:

Ըստ թերթին, Սահաֆ ըսած է, թէ Իրաքի հարաւ կատարուած բախումները շփոթի մատնեցին թէ՛ վիրէնք եւ թէ՛ ամերիկացիները: Թերթը դիտել տուած է, որ ամերիկեան զինուոր Պուշն ու անոր իշխանութիւնը կը դատապարտեն ստախօսութեամբ:

«Սաֆիր»ի համաձայն, Ռաշիդ կը ստորագրուած արարքները կը ընէ Սուրիան պատժելու կոչ մը, իսկ ղեկավարութիւնը դէմ չի կենար այս քայլին:

«Վիուս» գրած է, թէ Պոլսոյ մէջ ցուցեր ծայր առիթ իբրեւ բողոք թուրք պինտորներուն իրաք գործուղման, իսկ իշխող խորհուրդը կը բացառէ որեւէ ընդդիմութիւն եւ կը յայտնէ, որ Ռաշիդ կը իրենց հետ եղած հաղորդակցութիւնները սպառնալիքներ են:

Ըստ «Վայթ»ի, Պաղտատ յայտնեց, թէ 7 - 10 անձեր սպանուած են բանակայիններու կեդրոնին վրայ եղած յարձակումին ընթացքին, սպանացի դիւանագետ մը ահաբեկուած է, իսկ ամերիկեան ուժերը իրենց կեդրոնը կը փոխադրեն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԵՐԱՆԱՅԻՆ ԱՅՆ ԼՈՒՐԵՐ

«Սաֆիր» գրած է, թէ Առնոյտ Շվարցենեկը Քալիֆորնիան կը ղեկավարէ առանց ծրարուն լոյսին տակ, իսկ Պուշ գլխաւոր օգտուողներէն է այս անակնկալ ընտրութիւններէն:

Ըստ «Անուար»ի, Իրաք յայտարարած է, որ ձեռք բերուած է 4 ծայրայեղականներ, որոնք կը ծրագրէին ահաբեկչական գործողութիւններու դիմել:

«Նահար» նշած է, թէ Իսրայէլ կը մտադրէ իր պահեստի պինտորները կանչել, իսկ Քորէյի կառավարութիւնը կը ներկայանայ երեսփոխաններուն՝ Ֆաթիի կողմէ անոր ուղղուած քննադատութիւններէն ետք:

Ըստ թերթին, «քանդակ» ընտրուեցաւ Քալիֆորնիոյ կառավարիչ:

«Լիուս» գրած է, թէ մինչ պաղեստինցիներ իրենց կառավարութիւնը կը կապեն եւ լոյսեր կը կապեն անոր, Շարոն պահեստի պինտորները պաշտօնի կը կանչէ եւ կը պատաստուի յարձակումներու:

ՀԱՏԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ՀԵՏ

19

ՄԱՏՐ

ՄԵԾԱԳՈՅՆ ՉԱՐԻՔ

Նարեկացի, որ իր ամբողջ Մատենանը գրի առած է Աստուծոյ կամ Քրիստոսի ներման ու թողութեան արժանանալու համար, այն հոգեւորականներէն է, որոնք երկրաւոր կեանքին կարեւորութիւնը չեն տար ու անհամբեր են Աստուծոյ արքայութեան արժանանալու համար: Նարեկացիին համար երկրաւոր կեանքը կարեւոր է, պայմանաւ որ մարդը շարունակ գիտակցութիւնն ունենայ իր մեղքերուն, որպէսզի Աստուծոյ կարգադրութեանը թիֆթեւայ այդ մեղքերէն ու ապրի նուազ ատապաւանդով: Այս պայմաններուն մէջ է, որ Նարեկացին մահուան մէջ կը տեսնէ մեծագոյն չարիք մը: Մահը մեծագոյն չարիքն է, եթէ այդ մահը յատուկ իմաստ չզգեցած, գիտակցուած մահ մը չէ: Միայն իմաստաւորած մահն է, որ մահը կը դարձնէ մեծագոյն չարիք դառնալի:

Այս մասին յստակ ակնարկութիւն մը ունի ան. Ինչպէս որ այլազգի իմաստասէր մը Մահը կը համարէ մեծագոյն չարիք, եթէ իսկապէս իմաստաւորուած, գիտակցուած չէ այդ մահը,

ես ալ իմ խօսքով նոյնը կը հաստատեմ: Որովհետեւ անզգայ ու պաճարամիտ անասունի պէս կը մեռնի ի դուր, եւ չենք զարհուրիր, կը կորսուինք ու չենք սուսկար ապահար, Չենք երկիւղիր երբ հողին մէջ կ'իջնենք, կը տարագրուին ու չենք տագնապիր, կը մաշինք ու չենք անդարարուող իսկ, կը հատնինք անհոգ, անփոք, անտարբեր, կ'երթանք անգարծ ու չենք սքափիր, կը գերեզմարուինք ու չենք զգար զայն:

Ահաւասիկ այսպիսի անմիտ մահ մը իսկապէս մեծագոյն աղէտն է, կը փրկսոփայէ Նարեկացին, որ մահը ընդունելի պիտի նկատէ այն ատեն միայն, երբ մարդը իսկապէս պատրաստ պիտի ըլլայ եւ երբ մահը մասնաւոր իմաստ մը պիտի զգենու: Տարբեր կերպ մահը անմիտ անասուններուն մահուանէ տարբեր չէ, մահ մը ի գուր է, գուր տեղ կը պատահի:

Նարեկացիին նման Սուրբ Հոգեւորականի մը գրչին տակ վերի տողերը յատուկ արժէք կը ստանան ու մեզ կը հրաւիրեն մտածելու: Մահը գարհուրելի է եւ անբան արարած է ան, որ չի գարհուրի մահուան դիմաց, ան, որ Հոգ պիտի իջնէ ու չի վախնար, ան, որ կը տարագրուի ու չի սպանալիր:

Բայց Նարեկացին անմիտապէս կ'աւելցնէ այն ինչ որ իրմէ սպասելի է ու ինչ որ գիտեմք, թէ անոր մտածողութեան զլխաւոր առանցքը կը կազմէ: Մահը մեծագոյն չարիք է մահաւանդ, երբ ան մարդը կը ձեռնարկէ անպատրաստ վիճակի մէջ:

Վերի տողերէն քիչ վերջ, Նարեկացին ինքզինք կ'երեւակայ յայտնի «անպատրաստ» վիճակի մը մէջ ու կը խորհրդածի:

Աշխատութիւնս ի գուր, ընդունայն, Ամբարներս լոկ ոչինչով լեցուն, պահեստներս հովիւն ցիրուցան, Ինքս դարձրի եմ ստուերաման, Իսկ կերպարներս՝ ետև ու ծաղրելի: Քանգի, Պոզոսի խօսքին համաձայն, երբ պատուիրանը եկաւ հասաւ ինձ, Ձիս անպատրաստ գտաւ լիովին իրեն: Մեղքերն իմ իսկոյն յարութիւն առին Յանդիմանելով արդարութենէն: Այն ատեն մահացայ ես կեանքի համար եւ կենդանացայ կորստեան համար:

Ահաւասիկ հիանալի տողեր, որոնք կը մագլցին դէպի իրենց վերջին շորս գագաթային տողերը: Ի՛նչ աղէտ, եթէ մահը քեզ յանկարծ կը ձեռնարկէ այն պահուն երբ ամբողջ աշխատանքդ բանի մը չէ ծառայել, շտեմարաններդ պարզապէս մնացրի ես, հովը առեր տարեր է պահեստներդ: Եթէ այս աշխարհէն մեկնելու հրահանգը հասնի այդպիսի վարկեանի մը, բոլոր մեղքերը յանկարծ յարուցելու պիտի առնեն ու նշաւակ պիտի դառնան Աստուծոյ յանդիմանութեան: Ասիկա է ահաւասիկ մեծ կորուստը, աղիտարի մահը: Եւ կ'արժէ որ քանի մը անգամ կրկնենք այն վերջին երկու տողերը, որոնցմով Նարեկացին կը բացատրէ այդպիսի աղիտարի մահ մը.

«Մահանալ կեանքի համար, եւ կենդանացայ կորստեան համար»:

Այս երկու տողերը մեզի շատ բան կը թելադրեն ո՛չ միայն Հոգեւոր իմաստով, այլ նաեւ փրկսոփայական նշանակութեամբ: Ազդարարութիւնը դիպուկ է, ահագանգը՝ ցնցիչ: Գոնէ եթէ միայն առաջինը պատահէր, այսինքն գոնէ եթէ մարդ մահանար կեանքի համար, ոչնչանար երկրաւոր կեանքի մէջ ու ամէն ինչ վերջանար այդ կերպով: Բայց ո՛չ: Այդքան չէ: Երանի՛ թէ այդքան ըլլար: Ի՛նչ մեղք որ կեանքի համար մահանալուն պիտի յաջողէ միւսը, որ ամէնէն սարսափազգուսն է: Կենդանանալ կորստեան համար: Այսինքն յարուցելու ատեն անընդունելու, տառապելու, իր մեղքերը քաւելու ու ամօթի ու թշուառութեան զգացումին մէջ գալարուելու համար յաւիտեանս յաւիտենից:

Եւ բարի Նարեկացին դարձեալ Աստուծոյ կ'ուղղէ իր աչքերը ու կ'աղերսէ.

Արդ այս բոլորին մատնուած գերիս Միայն դու կրնաս ազատել, փրկել Գեպի կեանք վերադարձնելով Մահուան ճուրղուած իմ հոգին:

Ռ. ՀՍՏԵՃԵԱՆ

ՍՏՈՐՈՒՍՆԵՐ ԱՆԾԱՆՈԹԻՆ ՍԵՒԵՌՈՒՆ ՀԱՅԵԱՅՔԸ Ի ՏԵՍ ԱՒԱՆԴԱԿՆԻՆ ԵՒ ՏՈՀՄԻԿԻՆ

Մեր ազգային - հասարակական կեանքի իւրաքանչեւ իրաւունքն էր բնորոշող տարբերութիւնը երեւոյթներէն ու անկախութիւնը շատնց մեր շրջապատին ու շարժումներէն: Առանցքը հանդիսացած է տարբեր առիթներու, յիշատակութիւններու եւ ազգային տօնախմբութիւններու առիթով եւ հայ մարդիկ երբեք ալ չեն թաքցուցած իրենց հրճուածքն ու ակնհայտ անհոգութիւնը՝ ի տես զանազան մարդերուն մէջ ի յայտ եկող եւ մեր ազգային կեանքին առնչուող բազմաթիւ երեւոյթներուն, որոնցմով «գատորոշուած» ենք ազգովին, այլապէս արժանանալով համախմբեալ եւ կազմակերպ ըլլալու արդար կոչումին:

Այսուհանդերձ, նման տարագումներ մեզ միշտ ալ իբրեւ հաւաքականութիւն հետու գտնած են ազգային պատգամաբանութենէ, այլասերիչ բարոյահոգեբանական բարոյութիւններէ: Աւելին. նման մատնանշումներ բոլոր ժամանակներուն ալ իրենց հանդիսացած են ազգային պատկանելիութեան ամրապնդումին, հայեցի արժէքներու ընդգրկումին, ազգային դիմագիծի առաւել թիրեղացման, ապագայ սերունդներու հոգեմտաւոր շտեմարանի լիցքաւորման:

Միւս կողմէ, հաւաքական կողմիցն ու գոզակահո, անհատական նախանձախնդրութիւններն ու մշտանորոգ յանձնառութիւնները յաւելեալ յատկատեսութիւն, քաղաքակրթութեան ուղղութեամբ եւ ազգային իրարմէջ շողախ կը ներարկեն՝ մարդկային վեհ տեսլականներու կենսագործման առնչութիւն:

Նման հպարտաւորութիւն եւ պերճախօս դրսեւորման պատճառութիւնը ընձեռնեցաւ փոքր թիւով հայտնիներու, որոնք, ինչպէս ամէն տարի, այս տարեշրջանին եւս, եկած էին մասնակից ըլլալու իր բնոյթով եզակի արարողակարգի մը, Պիքֆայայի դպրեւանքը եզերող այդեծածկ հողաշերտին վրայ, ուր մտաւորապէս երեք տասնամեակ է Վերանդմիջնաբար նորահաս սերունդին կը փոխանցուէին ազգային արժանապայելի սովորութիւններ՝ աւանդականին եւ տոհմիկին ընդելուզուած, երբ իւրաքանչիւր տարուան Սեպտեմբերի աւարտին,

մեղուական աշխատանքի մանրակերտ պատկերներու յաջորդականութիւնը կ'ուրուագծուէր բոլորին մտապատկերին մէջ:

Օգոստոսեան խաղողորհնէքին յաջորդող շարժումներուն, երբ Աստուածահարալ պտուղի հունձքը ըլլորի ողջոյնին կ'արժանանայ, նպատակասլաց աշխատանքով պարուրուած ամբողջ փաղանգ մը, գործի լծուած՝ Արտանազը արք. Թրթռեանի ժրջան մասնակցութեամբ, անոր ուղղակի, խտտապահանջ, բծախնդիր, եւ արգասարբ օրհնութեամբ եւ դպրեւանքներէն անմնացորդ եւ կարգապահ աջակցութեամբ տեղի կ'ունենայ ամբողջ պատմութեան մը շնչաւորումը, դարբերութիւններէն վերակենդանացած առհասարակ արարողութիւն մը՝ խաղողի քամոցէն պատրաստուած ուսպիւն պատրաստութիւնը, որուն փրփուրի ճաշակումն ու վայելքը ապրեցաւ նոյնիսկ անծանօթ արար հայրենակիցը, որուն սուր հետաքրքրութիւնը զինք մղած էր ներկայ գտնուելու այդ շաբթուան խորհրդաւոր եւ իւրաքանչիւր արարողութեան:

Յիրաւի, ամբողջ շաբթուր տեւած անընդհատ աշխատանքի մը ահաւանտեսը ըլլալու հրճուածքն ու բախտաւորութիւնը իր երկրացի պարուներուն միաձուլած, ան՝ արար երիտասարդ հայրենակիցը, գմայլանքով անտայտուեցաւ զինք շրջապատող դպրեւանքներուն եւ փոքր թիւով հայտնիներուն, հակառակ զիւղացի կերպարին ու ապրելաձեւին քաջածանօթ ըլլալուն: Ան չծածկեց իր զգացումը ի տես Հոգեւոր հայրերու եւ սաներու աշխուժութեան եւ հաւատամքին՝ ցուցաբերուած աւանդական եւ տոհմիկ արժէքներուն նկատմամբ: Աւելին. ան վաւերական պէս ամէն տարի, այս տարեշրջանին եւս, եկած էին մասնակից ըլլալու իր բնոյթով եզակի արարողակարգի մը, Պիքֆայայի դպրեւանքը եզերող այդեծածկ հողաշերտին վրայ, ուր մտաւորապէս երեք տասնամեակ է Վերանդմիջնաբար նորահաս սերունդին կը փոխանցուէին ազգային արժանապայելի սովորութիւններ՝ աւանդականին եւ տոհմիկին ընդելուզուած, երբ իւրաքանչիւր տարուան Սեպտեմբերի աւարտին,

նաեւ՝ մասնակից հասարակութեան երկիւղած եւ հայադրուած կեցուածքին, ապա քիչ ետք տաշտի մէջ գտնուող հիւթին հակողութիւնը յանձն առած վարդապետին աղօթքի մը մոնտըններուն, սաներու երգեցողութեան եռանդին, այցելուներու քաջալերանքին եւ խանդավառութեան, պահիկ մը սեւեռուն հայեացքով, լուր եւ տաղաչափեալ բուռներով արտասանեց իր հոգիին ալքերէն բխող աղօթանման խօսքեր՝ փառաբանելով ստեղծուած միտնորոտին արեւնոց զօրութիւնը:

Այս երիտասարդին զարմանքին դրդապատճառն ու բացատրութիւնը ըստ ամենայնի յստակ է: Սակայն, անոր ստացած տպաւորութիւնը՝ աւանդականին եւ տոհմիկին, կրօնականին հեզահամբոյր ներկայութեան, ազգային ու մարդկային ուրուագծումով համապարփակ եւ խտացեալ իրականութեան անտեղի իրաւունքներու թափանցումը կը բացայայտէ, եւ մեր ազգային կեանքին մէջ տակաւ զգալի կը դառնայ ազգային եւ տոհմիկին կառայելու կարիքը... Նիւթապաշտական յագեցած այս օրերուն, տախկոյս չկայ, որ հոգեխառն ապրումներու առիթ կը հանդիսանայ վերակենդանացումը նմանատիպ աւանդութիւններուն, որոնց ժողովրդականացման անհրաժեշտութեան չեղադրումը հաւաքական ողջախոհութիւն կ'ենթադրէ՝ պարզապէս ինքնուրուագծուած յաւելեալ «պերճախօս» մատուցելու դիտաւորութեամբ: Հոգեբարեւ նախաձեռնութիւններու կողմիցն հայրենագուրկ սերունդներու ներաշխարհին հենքը նկատուող կենարար ներուժին պէտք է կառչել, ի խնդիր համաժողովրդային տենչափուն արարչագործութիւններու եւ ազգային տեսլապաշտ հետանք կարներու վերընձիւղման:

ՀԱՄԲԵԿ ԳԻԼԱԼԵԱՆ

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի 22ՐԴ ՀԱՏՈՐԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՇՆՈՐ ՀԱՀԱՆԴԵՍԸ ԵՒ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ «ՀԱՆԴԵՍ»-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մասնակցելու համար «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի 22րդ հատորին Երեւանի մէջ կայացած շնորհահանդէսին, ինչպէս նաեւ ներկայացնելու համար «Հանդէս»ը Հայագիտական Ա. Համաժողովին, 8 Սեպտեմբերին «Հանդէս»-ի խմբագրական կազմին կողմէ Արմէն Իււնչիչեան մեկնեցաւ Երեւան:

Չորեքշաբթի, 10 Սեպտեմբերի յետմիջօրէի ժամը 2:00ին, Եղիշէ Չորեքեցի անուն հիմնադրութեան եւ արուեստի թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ շնորհահանդէսը՝ ներկայութեամբ 60է աւելի մտաւորականներու, «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի տարբեր հատորներուն աշխատակցած հայագէտներու, Հայաստանի մէջ գործող հայ աւետարանչական ընկերակցութեան պատասխանատուներու, զանազան գիտաւսումնական հաստատութիւններէ հրաւիրեալներու: Ներկայ էին պատկերասփիւռի կայաններու եւ թերթերու թղթակիցներ:

Բացման խօսքը կատարեց «Հանդէս»-ի Հայաստանի ներկայացուցիչ Արծուի Բախչինեան, որմէ ետք խօսք առաւ Արմէն Իււնչիչեան, որ ներկայացուց «Հայկազեան հայագիտական հանդէս»-ը, ընդգծելով «Հանդէս»-ին հիմնական ուղղութիւններէն երբեք գիտականութիւն, նիւթերու տեսականի եւ առարկայականութիւն: Ան ամփոփ գիծերով ներկայացուց նաեւ հայագիտութիւնը այժմէակալ գիտութեան մը վերածելու խմբագրական կազմին մտահոգութիւնները:

Ելոյթ ունեցան նաեւ Պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր Պարոյր Մուրտեան եւ Հրանդ Խառատեան: Չոյզ ելոյթ ունեցողներն ալ մեծապէս դրուատեցին «Հանդէս»-ին վաստակը հայագիտութեան մարզին մէջ, գնահատուեցան «հանդէս»-ի տարբեր բաժինները: Դրական արտայայտութիւններու եղան նաեւ հայագիտութիւնը այժմէակալացնելու «հանդէս»-ի ջանքերուն վերաբերեալ: Առաջարկուեցաւ աւելի տեղ տալ Հայաստանի մէջ ցարդ այնպիսի մնացող, բայց Սփիւռքին քաջածանօթ հայագէտներու աշխատանքներուն եւ անոնց վաստակի ուսումնասիրութեան, սփիւռքահայ կեանքի եւ մտահոգութիւններու գիտական վերլուծումը յատուկ ուշադրութեան առարկայ դարձնել, ուսումնասիրել հայոց մասին օտար հեղինակներու գործերը եւ... «Հանդէս»ը հրատարակել տարին երկու անգամ:

Ելոյթ ունեցաւ նաեւ Հայ աւետարանչական ընկերակցութեան Հայաստանի ներկայացուցիչ Ռոնէ Լեւոնեան, որ ներկայացուց Հայկազեան համալսարանը իր թեւ Հայ աւետարանչական ընկերակցութեան իրագործումներէն մէկը՝ գործակցութեամբ ՄԱՀԱԵՆԻ:

Շնորհահանդէսի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր կատարուեցաւ կարծիքներու փոխանակում, եւ ներկայները շնորհակարարեցին «հանդէս»-ին աշխատանքները:

Նոյն երեկոյեան շնորհահանդէսին լրատուութեամբ անդրադարձան հանրապետութեան «Հ1», «ԱԼՄ», «Շողակաթ» եւ պատկերասփիւռի այլ կայաններ: «Շողակաթ» Արմէն Իււնչիչեանի հետ ունեցաւ նաեւ հարցազրոյց մը:

Յաջորդող շաբթուան ընթացքին «Հանդէս»-ին պատկերակը մասնակցեցաւ նաեւ «Հայագիտութեան արդի վիճակը եւ Հարցազման հետախուզութիւն» նիւթով միջազգային Ա. Համաժողովին՝ ներկայացնելով «Հայկազեան հայագիտական հանդէս»-ը:

Եւ շնորհահանդէսին եւ համաժողովի ծիրին մէջ, «Հանդէս»-ի պատկերակը հանդիպութիւններ ունեցաւ Հայաստանի հայագիտական տարբեր կեդրոններու, ինչպէս՝ գրականութեան եւ արուեստի թանգարանի, պետական համալսարանի, մատենադարանի, Ցեղասպանութեան թանգարանի հիմնարկի, Սփիւռքը գիտաւսումնական կեդրոնի եւ հայաստանեան ու արտասահմանեան հայագիտական այլ կեդրոններու պատասխանատուներուն ու ներկայացուցիչներուն հետ:

ԲԱՄԲԵԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Քերտուանի շրջանի օգափոխութեան վայրերէն մեկուն մէջ հայ կիւն մը գնումի համար նպարավաճառի խանութ մը կը ս'ուրէ: Կը գնէ ծրար մը մաքարն: Երբ ծրարին վրայ զրուքիւնը կը կարգայ, հոն կը տեսնէ «Մէյս ին Թըրքի» գրութիւնը: Հայուհին խանութպանին կը վերադարձուէ ծրարը՝ անկէ պահանջելով լիբանանեան արտագրութիւն մը: Խանութպանը կ'ուզէ համոզել յանախորդուհին, թէ շատ ընտիր ու համեղ է, բայց հայուհին չ'ընդունի, կը գնէ լիբանանեան արտագրութիւն եղող մաքարն, որ աւելի քան ընտիր ու համեղ է: Խանութի մէջ ներկայ եղող տեղացի յանախորդուհի մը՝ ի տես այս երեւոյթին, կ'ըսէ խանութպանին. - Մենք լիբանանցիներս իսրայէլեան ապրանք կը գնենք, որ հայերը թրքական ապրանք գնեն. բուրբ միլիոններով հայեր շարդած է...

Կիւնի, 12 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան, գրեթէ միեւնոյն ժամերուն, երբ հրապարակային հանդիպութիւն տեղի պիտի ունենայ, երբ տարբեր վայրերու մէջ: Զմամուռ վազքին մէջ՝ Նահատակներու յուշակոթողի բացում, Հ. Բ. Միտրեան «Տեմիրեան» կեդրոնի մէջ պիտի մեծարուի տոքթ. Թորոս Թորոսեան, «Յ. Տէր Մեղրեան» հանդիսասրահի մէջ տեղի պիտի ունենայ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԳՆՈՒՄԱՆ ԿԱՐԿԱՅՈՒՄԻՆ: Թարգմանչաց տունն ալ իրով: Կը խնդրուի չխաչաճել:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ «Ազգակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական լուրջ վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃԻ
EMPLOYMENT DEPARTMENT
ձեռնարկած է լայն արշափ մը՝
«ՈՉ ՄԷԿ ԱՆԳՈՐԾ ԵՐԶԱՆԱԻԱՐՏ»
կարգախօսով:
Կապ հաստատուած է գործի ապահովման՝ մեծ ընկերութիւններու եւ ուղղակի գործատէրերուն հետ:
ԾԱՆՕԹ. - Կը խնդրուի դիմեն միայն ՓՕԼԻԿԼՈԹԻ շրջանաւարտներն ու աշակերտները՝ առաւօտեան ժամը 8:30էն կ.է. ժամը 6:30:
EMPLOYMENT DEPARTMENT
POLYGLOT COLLEGE: Dora, Tel: 01251320

7րդ Արուեստ



ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՕՆԸ ՈՐՈՇ ԽԱՐԽԱՓՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՏԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Ամբողջ շաբաթ մը լիբանանեան եւ միջին արեւելեան առոււմով շարժապատկերի աշխարհին մէջ աշխուժութիւն ստեղծած եւ շրջանին հիմնական շարժապատկերի փառատօնը դառնալու իր առաջին քայլերը առած Միջին Արեւելքի շարժապատկերի փառատօնը Չորեքշաբթի, 8 Հոկտեմբերի երեկոյան **ԵՆԻՆՍՏՐՈՒՄ** մէջ տեղի ունեցած հանդիսութեամբ մը փակեց իր շաբաթը՝ տասներկու մրցանակներ շնորհելով մրցակցութեան ներկայացած քսանչորս ժապաւէններէն գատական կազմին ընտրութեան արժանացածներուն:

Կան կազմին անդամներէն երեքին բացակայութիւնը անպայմանօրէն իրենց ժառանգական անդրադարձը ունեցան փառատօնին հեզասահ ընթացքին վրայ, այսուհանդերձ պէտք է նշել, որ Միջին Արեւելքի շարժապատկերի փառատօնը յաջողեցաւ առնել Լիբանանը Միջին Արեւելքի շարժապատկերի աշխարհին կեդրոնական հրապարակը դարձնելու իր նշանակէտին նախաքայլը: Անոր մրցակցութեան բաժինին մէջ տեղ գտած էին բացառաբար միջինարեւելեան եւ արաբական ժապաւէններ, որոնք կը ներկայացնէին Լիբանանը, Իրանը, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Թունիզը, Մարոքը, Թուրքիան, Իրաքը եւ Եգիպտոսը: Ծագումով հայ եգիպտացիներէն զատա-




Հանդիսատեսներու քուէին արժանացած «Ռեսպիրո» ժապաւէնին որմագըր:

տացի դերասանուհի կամ նոյնիսկ մաս չկազմե-
Լուպուլուպայի գլխավորած
դատական կազմին երեք
անդամները փառատօնին

րացաւ մարտըքի բեմադրիչ Ֆաուզի Պենաստի իր «Էթաուզըն մանթց» ժապաւէնին համար, իսկ այս բաժինն դատական կազմի յատուկ մրցանակին արժանացաւ իրանցի բեմադրիչ Պապաք Փայամի «Սայլընս պիթուին թու թոթց» ժապաւէնը: Լաւագոյն վաւերագրական ժապաւէնի «Ալէֆ»ին տիրացաւ իրանեան «Պէպթիսթց աֆ Իրան» ժապաւէնը (բեմադրիչ՝ Ապաս Թաւիլուար), իսկ իրանեան այլ ժապաւէնի մը՝ «Նուր»ի բեմադրիչ Պահման Քարոպիթամի արժանացաւ լաւագոյն բեմադրիչի մրցանակին: Վաւերագրական ժապաւէնի դատական կազմի յատուկ մրցանակը յատկացուեցաւ թունիզեան «Ռայս Լայհար» (բեմադրիչ՝ Հիշամ Պէն Ամար) ժապաւէնին: Ինչ կը վերաբերի գեղարուեստական կարճ ժապաւէններուն, ապա այս բաժնումն էին դատական կազմի յատուկ մրցանակին արժանացաւ իրանեան հայ բեմադրիչ Նիկոլ Պէգեան, հայկական պարտուեստի նուիրուած իր «Վարով» ժապաւէնին համար: Լաւագոյն կարճ ժապաւէնի «Ալէֆ»ին արժանացաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններէն «Ժաուհարա» ժապաւէնը (բեմադրիչ՝ Հանի Ալ Շայպանի), լաւագոյն բեմադրիչի մրցանակին՝ իրանեանցի բեմադրիչ Ամատ Ղոսէյն իր «Օփըրէյշըն Նամպըր...» ժապաւէնին համար, իսկ լաւագոյն կարճ ժապաւէնի բեմագրութեան՝ իրանեան «Տը Ռուինտ աֆ Պէլուլթ» ժապաւէնը:

Նոր ժապաւէններ

«Իրլիդն ճապ»
Բեմադրիչ՝ Ֆ. Կերի Կրէյ
1969ին Մայքըլ Բեյնի կողմէ բեմադրուած համանուն ժապաւէնին վրայ հիմնուած արկածախնդրական այս ժապաւէնին մէջ արեւտա-վարժ գոյերու խմբակ մը վեցեակի մէջ իր «առաքելութեան» աւարտին դէմ յանդիման կու-



գայ իր անդամներէն մէկուն անկանխատեսելի դաւանութեան, որուն կը յաջորդէ խմբակին ղեկավարին սպանութիւնը: Տարօրինակ մասնագիտութիւններով օժտուած վրէժխնդիր գոյերը կը յուսն իրենց իրաւունքը նկատուող գանձին վերատիրանալու ծրագիրներու գործադրութեան: Անոնց կու գայ միանալու իր հօր մահուան վրէժը լուծելու ձգտող Սթիւլան (Չարլիզ Թերըն): Հերոսներուն գործակցութեան արդիւնքը կ'ըլլայ հերոս արկածախնդրութիւններու, անկանխ դարձուածքներու եւ հալածանքի տեսարաններու ամբողջութիւն մը, որուն մէջ տիրական կերպով չի յաջողիր ցցուիլ գլխաւոր դերակատարներուն՝ Չարլիզ Թերընի, Էտուարտ Նորթրի, Մարք Ուանկլըրկի խաղարկութիւնը: Բայցեւայնպէս «Տը իրլիդն ճապ» կը մնայ հեշտին յաջող ժապաւէն մը, որ ունի հետաքրքրական ճիւղ:

«Այլերիթի»
Բեմադրիչ՝ Նէյմա Մեհրիպ
Ոճային ճիւղ մը հոգեբանական դարձուածքներով օժտող այս ժապաւէնը, որ որոշ չափով



ներշնչուած կը բուր ըլլալ Հիլքորթի «Սայթ» գործէն, ունի մուր եւ փոքորկոտ մթնոլորտ: Դեպքերուն ընթացքը պանդուխտ մը մէջ կը խմբուտան մէկ կերպարներ, որոնք բէեւ ապաստան կը գտնեն փոքորիկէն, սակայն մէկ գիշերուան մէջ սկանաւտս կը դառնան ոճրային պատահարներու շարքի մը: Անտեսանելի ձեռք մը կը սպառնայ մէկ առ մէկ սպանել գիրքերը: Անկանխ եւ հանդիսատեսին ուշադրութիւններու յարուած պահող այս ժապաւէնը ունի հետաքրքրական արտ մը, որուն նախաշնչանքներուն սակայն կարելի է հանդիպիլ անոր ընթացքին: Հակառակ իր սարսափազդող տեսարաններու առատութեան, ոճրային ժապաւէններու կրկնութիւններու ծուղակէն խուսափած եւ իւրայատկութիւններով յատկանշուող այս ժապաւէնին գլխաւոր դերակատարն է ձոն Քիլպաք, որուն կողքին դեր ստանձնած են՝ Ռէյ Լիորթը, Ամանտա Փիլք, ձոն Հոքը եւ ուրիշներ:

«Ուար կըրլ ուոնք»
Բեմադրիչ՝ Տեմի Կորպըն
Պատանիներու արկածախնդրական երգիծական ժապաւէններու կոյտին միացող այս ժապաւէնը, հակառակ իր սակաւաբիւ իսկապէս ծիծաղաշարժ տեսարաններուն, կը մնայ յատկանշական նորութիւններէ եւ ինքնատիպութեան գուրկ: «Սոփորական» պարմանուի մը Միացեալ Նահանգներէն Անգլիա կ'ուղղուի ծագութեան համար իր գոյութեան անտեղեկ ազնուական հօր, որուն նշանածն ու անոր պատանի աղջիկը, սակայն, ոչ այնքան հիւրընկալ մթնոլորտ մը կը ստեղծեն: Երկու մենքը բնականաբար կը ստեղծեն հետաքրքրական տեսարաններ: Ժապաւէնին մէջ դեր ստանձնած են Ամանտա Պայնզ, Քոլին Ֆիլք, Քեյլի Փրեսքըն:

ՆԻԿՈԼ ՊԵՃԵԱՆԻ «ՎԵՐՎ»Ը՝ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ԲՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

